



ԴԱՍ 7. «ԷԿՈՐՆԱԽՈՒՅՉԻ ՈՐՍԸ» (Խաղ, 1-4-րդ դասարան)

Դասի նպատակը

Այս դասի շնորհիվ աշակերտները սովորում են զանազանել բնական էկոհամակարգի կենդանի և անկենդան բաղադրիչները, գնահատել բնական միջավայրում գոյություն ունեցող գույների, չափերի ու ցանցերի բազմազանությունը: Ընդհանուր առմամբ, առաջադրանքն աշակերտների և ուսուցիչների համար առիթ է դառնում խոսելու բնության և նրա մեջ մարդկության դերի մասին:

Անհրաժեշտ պարագաներ

Վերցրե՛ք «Էկոգանցատուփ»-ը: Նրա մեջ տեղադրե՛ք ներքևում բերված «Էկոբնախուզական» ցանկից մի առարկա: Առաջարկե՛ք աշակերտներին կռահել, թե ինչ է պահված տուփի մեջ: Կարող եք հուշումներով օգնել, սակայն դրանք չպետք է լինեն ուղղակի: Կարելի է խրախուսել երեխաներին, սակայն թույլ տալ, որ յուրաքանչյուրն ինքը պատմի իր տեսածն ու զգացածը: Նրանք պետք է պատճառաբանեն, թե ինչու են հենց այդ ընտրությունը կատարում: Պետք է թույլ տալ, որ երեխաներն արտահայտվեն՝ առանց դրական կամ բացասական որակումներ տալու:

Կազմե՛ք երեքից չորս հոգանոց խմբեր: Յուրաքանչյուր խմբի համար պատրաստե՛ք առարկաների առանցին ցանկ:

Դասի ընթացքը

Կազմակերպե՛ք էքսկուրսիա դեպի մոտակա անտառ կամ զբոսայգի: Բացատրե՛ք աշակերտներին, որ այսօր խաղալու եք «Էկոբնախուզի որս» խաղը: Հանցնարարե՛ք նրանց մոտ 15 րոպե շրջել և գտնել «Էկոբնախուզական» ցանկում նշված պարագաներից մի քանիսը: Առարկաները գտնելուց հետո նրանք պետք է գրեն դրանց անուններն իրենց նկարագրությունների դիմաց: Վերադառնալով խմբերը պետք է միմյանց պատմեն, թե յուրաքանչյուր նկարագրության համար ինչ են գտել:

Ավելի փոքրահասակ երեխաների հետ սա կարելի է կատարել որպես բանավոր վարժություն: Երեխաները կխոսեն, յուրաքանչյուրը կսկսի «Ես տեսնում եմ...» բառերով, իսկ մյուսները կփորցեն կռահել առարկայի անունը: Նա, ով ճիշտ կկռահի, ինքը ցանկից կընտրի մյուս առարկան: Խաղը կշարունակվի այնքան ժամանակ, մինչև ցանկը սպառվի: Կարող եք աշակերտների հետ շրջել, մոտենալ առարկաներին և ավելի մանրամասն զրուցել դրանց մասին:

«Էկոբնախուզական» ցանկ

«Ես տեսնում եմ...»

մի բան, որը գեղեցիկ է
մի բան, որը սառն է
մի բան, որը չոր է
մի բան, որը մազմզոտ է
մի բան, որը կոշտ է
մի բան, որը ծանր է
մի բան, որը տաք է
մի բան, որը հսկայական է
մի բան, որը ցզվող է
մի բան, որը ցվացն է
մի բան, որը սրածայր է
մի բան, որը բնության մասնիկ չէ

մի բան, որը փշոտ է
մի բան, որը խորդուբորդ է
մի բան, որը կլոր է
մի բան, որը սուր է
մի բան, որը լայծուն է
մի բան, որը հոտավետ է
մի բան, որը փափուկ է
մի բան, որն աղմկոտ է
մի բան, որը թաց է
մի բան, որը փոքրիկ է
մի բան, որը եռանկյունի է

Ըստ՝ <http://www.ecokids.ca> կայքի, 2004 թ.: